ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 2080 - Ա

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածը, ինչպես նաև «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Օրբելյանների փողոց թիվ 5/1, 5/3, 4 և 5/2 հասցեներում պետական սեփականության շենք, շինություններով ծանրաբեռնված, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 09-003-0111-0003 կադաստրային ծածկագրով 0,2963 հեկտար հողամասի և 09-003-0111-0018 կադաստրային ծածկագրով 0,0864 հեկտար հողամասի նվիրատվությունը (այսուհետ՝ գույք) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի կողմից Հայաստանի Հանրապետությանը և գույքն ամրացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմին:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի հետ համատեղ սույն որոշման 1-ին կետից բխող նվիրատվության պայմանագրի կնքումը, ինչպես նաև Գորիս համայնքի ղեկավարի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի գլխավոր քարտուղարի միջև գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ սահմանելով, որ նվիրատվության պայմանագրի կնքման և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ